ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 29 » փետրվարի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-12/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի 12.02.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 12.02.2016թ. ներկայացրած բողոքով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ 08.01.2016թ. մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և

ներկայացված հայտերի գնահատման արդյունքում Ընկերությունն Ընթացակարգի 1-ին, 4-8-րդ չափաբաժիններով ճանաչվել է 1-ին տեղը զաբաղեցնող մասնակից, իսկ 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի առաջարկած գները ցածր են եղել նախահաշվային գնի 75%-ից և գնահատող հանձնաժողովի կողմից դրանք գնահատվել են չիմնավորված ցածր գնային առաջարկ՝ պահանջելով ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ: Ընկերության կողմից ներկայացվել է 15.01.2016թ. տեղեկանք, որով գործընկեր կազմակերպությունը տվյալ պահին ներկայացրել է մատակարարման հետևյալ գները.

1. Լվացքի փոշի ավտոմատ (կգ)-515 ՀՀ դրամ, գնային առաջարկում նշված 522 ՀՀ դրամի դիմաց,

2. Սպիտակեցնող հեղուկ (ժավել) 128 ՀՀ դրամ, գնային առաջարկում նշված 135 ՀՀ դրամի դիմաց:

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ ապրանքների շուկայական գներն անընդհատ փոփոխվում են, ուստի Ընկերության կողմից ներկայացված գինը համապատասխանել է տվյալ պահին գործող գնին և որևէ անհամապատասխանություն չկա գների հիմնավորման մեջ: Ընկերության կարծիքով տվյալ պահանջն իր մեջ պարունակում է և որոշակի սուբյեկտիվիզմ և որոշակի ռիսկեր: Պատվիրատուն պահանջել է հավաստում գնի իրական լինելու մեջ, իսկ Ընկերության կողմից ավելի մանրամասն տրվել են տվյալ պահին գործող գները, որոնք, ըստ Ընկերության, անհամապատասխանություն չեն առաջացնում հիմնավորման մեջ, այլ ընդհակառակը, ցույց են տալիս տվյալ ապրանքի գնի դինամիկան:

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն նշել է, որ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջների վերաբերյալ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը (2013-2015թթ.) 2 մլրդ. ՀՀ դրամից ավել է եղել, որը տասնյակ անգամ գերազանցում է «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասին հայտարարության պահանջները, ինչից հետևում է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ճիշտ չի գնահատել վերը նշված չափանիշները և կայացրել է ոչ ճիշտ որոշում, այսինքն, Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի որոշումն անհիմն է, ոչ իրավաչափ, և ոչ միայն չի բխում Ընթացակարգի պահանջներից, այլ նաև խախտում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ըստ որի հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընկերությունը հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն չի խախտել Ընթացակարգի ոչ մի պահանջ, ուստի պետք է ճանաչվի Ընթացակարգի 1-ին, 4-8-րդ չափաբաժիններով հաղթող իր բոլոր իրավունքներով և պարտականություններով, ուստի Ընկերությունը խնդրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.01.2016թ. տեղի ունեցած նիստի որոշումը համարել չեղյալ և «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին, 4-8-րդ չափաբաժիններով ճանաչել հաղթող մասնակից:

Ընկերությունն, ի լրումն ներկայացված բողոքի, 23.02.2016թ թիվ 81/2015 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել հարկային մարմինների կողմից ընդունված «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի 2015թ. հաշվապահական հաշվեկշիռը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.02.2016թ. թիվ ԴՎԱ/402 գրությամբ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տնտեսական, սանիհգենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացվել առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց

հարկային պարտավորությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված Կարգի 48-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի տվյալները «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով չեն համապատասխանել հրավերով նախատեսված պայմաններին, մասնավորապես, մասնակցի գնային առաջարկը կազմել է՝ 103242202 ՀՀ դրամ, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված համապատասխան եզրակացության հիման վրա հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է 48310780 ՀՀ դրամ, որը Կարգի 57-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն, չպետք է պակաս լիներ ներկայացված գնային առաջարկից: Բացի այդ, Ընթացակարգի 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով մասնակցի ներկայացրած գների հիմնավորման մեջ ևս առկա է եղել անհամապատասխանություն, մասնավորապես, ըստ գնային առաջարկի, տվյալ ապրանքատեսակների մասով ինքնարժեքները կազմել են համապատասխանաբար 395 ՀՀ դրամ և 102 ՀՀ դրամ, այնինչ, ըստ գնի հիմնավորման՝ մասնակցի կողմից այդ ապրանքների ձեռքբերման գին էր սահմանված 515 ՀՀ դրամը և 128 ՀՀ դրամը, այսինքն մասնակցի ներկայացված գնի հիմնավորմամբ ներկայացված գներն ավելի բարձր էին, քան տվյալ ապրանքատեսակների մասով ներկայացված ինքնարժեքները:

Հիմք ընդունելով վերը նշված փաստերն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի հայտը:

3. <u>ԳԲԽ-12/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-12/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տնտեսական, սանիհիգենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ

ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից **04.01.2016թ.** ներկայացվել է հայտ:

3. Ընկերությունն Ընթացակարգի հրավերի N 4 հավելվածով՝ գնային առաջարկով հայտնել է, որ ուսումնասիրելով հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը՝ առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

Չափա բաժին ների համարը	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակ	Ինքնարժեք (Մեկ միավորի գնի մասով)	Շահույթ (Մեկ միավորի գնի մասով)	ԱԱՀ (Մեկ միավորի գնի մասով)	Մեկ միավորի առաջարկված գինը /տառերով և թվերով/	Առաջարկված ընդհանուր /չափաբաժնի/գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6	7	8=5+6+7	9=8x4
1	օճառ ձեռքի	կգ	71400	482	48	106	636 (վեց հարյուր երեսունվեց)	45410400 (քառասունհինգ միլիոն չորս հարյուր տաս հազար չորս հարյուր)
2	Օճառ հեղուկ	կգ	1100	1592	158	350	2100 (երկու հազար հարյուր)	2310000 (երկու միլիոն երեք հարյուր տաս հազար)
3	Օճառ տնտեսական	կգ	36370.6	441	44	97	582 (հինգ հարյուր ութսուներկու)	21167689,2 (քսանմեկ միլիոն հարյուր վաթսունյոթ հազար վեց հարյուր ութսունինը ամբողջ երկու)
4	Քսուք, կոշիկի փայլեցման համար	կգ	24213	461	46,5	101,5	609 (վեց հարյուր ինը)	14745717 (տասնչորս միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր տասնյոթ)
5	լվացքի փոշի ավտոմատ	կգ	5288	395	40	87	522 (հինգ հարյուր քսաներկու)	2760336 (երկու միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար երեք հարյուր երեսունվեց ՀՀ դրամ)
6	Լվացքի փոշի ձեռքով լվանալու համար	կգ	39615	279	28,5	61,5	369 (երեք հարյուր վաթսունինը)	14617935 (տասնչորս միլիոն վեց հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր երեսունհինգ)
7	լվացող նյութեր (սպիտակեցնող, հեղուկ (ժավել)	լիտր	12075	102	10,5	22,5	135 (մեկ հարյուր երեսունհինգ)	1630125 (մեկ միլիոն վեց հարյուր երեսուն հազար հարյուր քսանհինգ)
8	Զուգարանի թուղթ ռուլոնով	հատ	1000	455	45	100	600 (վեց հարյուր)	600000 (վեց հարյուր հազար)

4. Ընթացակարգի 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններով որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.01.2016թ. ժամը 9:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.4 կետով որոշվել է Ընթացակարգի 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի գնային առաջարկները գնահատել չհիմնավորված ցածր:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.01.2016թ. գրությամբ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով ուղարկել է ծանուցում՝ ցածր գնային առաջարկների վերաբերյալ հիմնավորումներ ներկայացնելու համար՝ հայտնելով, որ հայտերի գնահատման արդյունքում «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին, 4-8-րդ չափաբաժիններով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, սակայն Ընթացակարգի 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի առաջարկած գները ցածր են եղել նախահաշվային գնի 75 տոկոսից և հանձնաժողովի կողմից դրանք գնահատվել են չհիմնավորված ցածր գնային առաջարկ, ուստի անհրաժեշտ է հրավերով սահմանված կարգով ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ:

7. Ընկերության կողմից ներկայացված չհիմնավորված ցածր գնային առաջարկի վերաբերյալ որպես լրացուցիչ հիմնավորում ներկայացվել է «Գեոթերմ» ՍՊԸ-ի 15.01.2016թ. տեղեկանքը, համաձայն որի «Գեոթերմ» ՍՊԸ-ն պարտավորվում է Ընկերությանը մատակարարել «լվացքի փոշի ավտոմատ (կգ)»՝ **515 ՀՀ դրամ** արժեքով և «սպիտակեցնող, հեղուկ ժավել (լիտր)»՝ **128 ՀՀ դրամ** արժեքով:

8. Ընկերությունը հայտի թիվ 3.3 հավելվածով՝ Ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

9. Պատվիրատուն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 14.01.2016թ. կատարած

հարցմամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ընկերության կողմից 2016թ. հունվարի 4-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

10. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի ***հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների (2012թ., 2013թ., 2014թ.)*** համախառն եկամտի հանրագումարը կազմել է 48 310 780 ՀՀ դրամ:

11. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.01.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետով որոշել է մերժել «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, քանի որ ըստ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված համապատասխան եզրակացության՝ **մասնակցի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից**, բացի այդ, Ընթացակարգի 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով մասնակցի ներկայացրած գների հիմնավորման մեջ առկա է անհամապատասխանություն, մասնավորապես, ըստ գնային առաջարկի՝ տվյալ ապրանքատեսակների մասով ինքնարժեքները կազմում են համապատասխանաբար 395 ՀՀ դրամ և 102 ՀՀ դրամ, այնինչ, ըստ գնի հիմնավորման՝ մասնակցի կողմից այդ ապրանքների ձեռքբերման գին է սահմանվել 515 ՀՀ դրամ և 128 ՀՀ դրամ, այսինքն մասնակցի ներկայացրած գնի հիմնավորմամբ ներկայացված գներն ավելի բարձր են, քան տվյալ ապրանքատեսակների մասով ներկայացված ինքնարժեքները:

12. «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն 01.02.2016թ. ժամը 10:16-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին և հայտնել, որ Ընթացակարգի 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններով հաղթող է ճանաչվել, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.01.2016թ. տեղի ունեցած նիստով որոշել է, որ Ընկերության կողմից ներկայացրած հայտի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ նկատի ունենալով 2012թ., 2013թ. և 2014թ., ուստի խնդրել է անվավեր համարել Ընթացակարգի վերը նշված որոշումը և հաղթող ճանաչել Ընկերությանը:

ԳԲԽ-12/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի 12.02.2016թ. ներկայացրած բողոքը և ի լրումն բողոքի ներկայացրած 23.02.2016թ թիվ 81/2015 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.02.2016թ. թիվ ԴՎԱ/402 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ ***իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝***

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից 04.01.2016թ. ներկայացված հայտի N 4 հավելվածը՝ գնային առաջարկը, կազմել է **103 242 202 ՀՀ դրամ**:

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրված եզրակացության՝ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիներ են համարվել 2012թ., 2013թ. և 2014թ., որոնց ***համախառն եկամտի հանրագումարը*** կազմել է 48 310 780 ՀՀ դրամ, ինչն էլ պակաս է եղել ներկայացված գնային առաջարկից, արդյունքում Ընկերության հայտը մերժվել է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից հայտը ներկայացվել է **04.01.2016թ**., ուստի Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիներն են ***2013թ., 2014թ. և 2015թ.***, այսինքն վերջինիս «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3.3 հավելվածը՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությունը, պետք է վերաբերվի ***2013թ., 2014թ. և 2015թ.***, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի որպես «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիներ նշվել են ***2012թ., 2013թ. և 2014թ.*** և Ընկերության հայտը մերժվել է՝ հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների (2012-2014թթ., այլ ոչ 2013-2015թթ.) համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս լինելու հիմնավորմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Ընկերության «Ֆինանսական միջոցներ» չափանիշը՝ հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի մասով (2012-2014թթ.) գնահատվել է Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության պահանջների խախտմամբ, ինչի արդյունքում մերժելով Ընկերության հայտը՝ Պատվիրատուն խախտել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Գտնում ենք այս մասով բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ընկերությունը հայտի գնային առաջարկում Ընթացակարգի 5-րդ չափաբաժնով՝ «լվացքի փոշի ավտոմատ» գնման առարկայի մեկ միավորի համար նշել է **ինքնարժեքը՝ 395 ՀՀ դրամ**, գինը՝ 522 ՀՀ դրամ, 7-րդ չափաբաժնով՝ «լվացող նյութեր (սպիտակեցնող, հեղուկ ժավել)» գնման առարկայի մեկ միավորի համար նշել է **ինքնարժեքը՝ 102 ՀՀ դրամ,** գինը՝ 135 ՀՀ դրամ, ինչը ցածր է եղել տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Այսպիսով, վերը նշված չափաբաժինների մասով ներկայացված չհիմնավորված ցածր գնային առաջարկի վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացվել է որպես լրացուցիչ հիմնավորում «Գեոթերմ» ՍՊԸ-ի 15.01.2016թ. տրամադրած տեղեկանքը, որի ուսումնասիրությունից երևում է, որ «Գեոթերմ» ՍՊԸ-ն նշված չափաբաժիններով նախատեսված «լվացքի փոշի ավտոմատ (կգ)» և «սպիտակեցնող, հեղուկ ժավել (լիտր)» ապրանքատեսակներն Ընկերությանը կմատակարարի համապատասխանաբար ***515 ՀՀ դրամով և 128 ՀՀ դրամով***: Պատվիրատուն, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով, ոչ բավարար է համարել հիմնավորումը, քանի որ ներկայացրած գների հիմնավորման մեջ արձանագրել է անհամապատասխանություն, մասնավորապես, ըստ գնային առաջարկի՝ տվյալ ապրանքատեսակների մասով ինքնարժեքները կազմում են համապատասխանաբար **395 ՀՀ դրամ և 102 ՀՀ դրամ**, այնինչ, ըստ գնի հիմնավորման՝ մասնակցի կողմից այդ ապրանքների ձեռքբերման գին է սահմանվել **515 ՀՀ դրամ և 128 ՀՀ դրամ**, այսինքն մասնակցի ներկայացրած գնի հիմնավորմամբ ներկայացված գներն ավելի բարձր են, քան տվյալ ապրանքատեսակների մասով Ընկերության ներկայացված ապրանքի ինքնարժեքները:

Գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չեն խախտվել Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները, ուստի այս մասով բողոքը ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի բողոքով ներկայացրած՝ Ընկերությանն Ընթացակարգի 1-ին, 4-8-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչելու պահանջին, ապա հայտնում ենք, որ Ընկերության այս պահանջը ենթակա է մերժման, քանի որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ընտրված մասնակից ճանաչելու լիազորություն չունի:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի 12.02.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

• դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տնտեսական, սանիհիգենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.01.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետով՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված համապատասխան եզրակացության համաձայն Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը գնային առաջարկից պակաս ներկայացված լինելու հիմքով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը.

• Ընթացակարգի 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով ներկայացված գների հիմնավորման մեջ առկա անհամապատասխանության հիմքով Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու պահանջը մերժել.

• «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի բողոքը՝ Ընկերությանն Ընթացակարգի 1-ին, 4-8-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչելու մասով մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-12/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան